

891.99

7-19

19 NOV 2006

09/2006

04 OCT 201

«ԱՐՓԻ»-ի գրադարան № 1.

891.99

ԱՐԳԱՐ ՊԱՅԱՉԱՏ

7-19

ԿԱՌԱՊԱՆ ՍՄԿՕ

Բ 11.

ՄԱՐՏ 7 1914



ԹԻՖԼԻՍ  
Տպարան «Էսպերանսո»  
1913

005 130 40

Հ. Մ. Թատարյանի փ-46/20

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՕՍՍՍ ՅՍՐԱԳՍՍ



Փրագարան  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

4833 - 2010

27

# ԿԱՌԱՊԱՆ ՄՄԿՕՆ

Է Մ Ք Ի 2

I

Կառապան Մմկօն ուղիղ երեսուն տարի երթևեկում էր քառանդակի վրայ կառապանի պաշտօնով: Այդ երեսուն տարուայ ընթացքում խճուղու երթևեկութիւնը շատ կապալառուների ձեռքն անցաւ, սակայն Մմկօն չը փոխուեց: Նա իր քառանդակով անցաւ մի կապալառուից միւսի ձեռքը, միայն այն տարբերութեամբ, որ իւրաքանչիւր անգամ նրա սայլակը ներկւում էր նոր գոյնով, ենթարկւում վերանորոգութեան, իսկ պառաւած ձիերը փոխարինւում նոր ու ջահէլ նժոյգներով: Վերջին տասնամեակում երբ նա անցաւ նոր կապալառուի ձեռքը, արժանացաւ գեղեցիկ նոր քառանդակին 4 նոր նժոյգներով ու 8 բուբլի ամսավարձի: Նա սկզբից ստանում էր 7 բուբ-

լի և այդ չնչին գումարը 30 տարուայ ընթացքում վերջը հազիւ դարձաւ 17 բուրլի:

Նա 18 տարեկան էր, որ կառապան դարձաւ: Նա յոյսը դրել էր երթեկեկող պարոններին նուէրների վրայ, որ 7 բուրլին դարձնէր գոնէ քսան: Սակայն միշտ այդ նրան չէր յաջողուում, ուստի մի քանի ամսից յետոյ հաշիւ պահելը թողեց, վճռելով ստացած նուէրներով միայն ապրել, իսկ 7 բամսավարձը գիւղն ուղարկել մօրը, որ նա էլ իւր հերթին տնտեսէր և իրագործէր մայր ու որդու մուրազը—Մմկօի ամուսնութիւնը:

Նա արդէն 25 տարեկան էր դարձել, բայց մուրազն իրականանալուց շատ հեռու էր դեռ: Մայրը ոչ մի կերպ չէր կարողանում ծայրը ծայրին հասցնել և որդուն իւրաքանչիւր անգամ նամակ գրել տալիս, գանգատուում է նրան: Սակայն Մմկօն յոյսը չէր կտրում: Նա իւրաքանչիւր անգամ պարունը գալիս մտածում էր երթեկեկութիւնը կը սաստկանայ, նուէրներ շատ կը ստանայ և անպատճառ գոնէ այդ աշնան 50 բուրլի ձեռքին տուն կը վերադառնայ, կամուսնա-

նայ փնտաւորապէս, ապա նորից կը վերադառնայ իւր գործին տարեկան մի մի անգամ նշանածի մօտ գնալու պայմանով:

Այդպիսի գարուններ յաջորդում էին իրար, բայց Մմկօի 50 բուրլին չէր հաւաքուում: Ու նա մի օր աշնան սկզբներին խիստ չարացաւ ու գրեց մօրը, որ այլևս չի ուզում ամուսնանալ և իրաւունք է տալիս մօրն ընտրած օր. Սուսամբարին գնալ ուրիշ մարդու:

Սակայն մայրն այդ նամակի մասին ոչինչ չասաց իւր ընտրած հարսնացուին, այլ աւելի գովեց իւր Մմկօին, որ նա շուտով գալու է փողով և ամուսնանալու:

Անցաւ ևս երեք տարի: Սուսամբարի ծնողները դրին իրենց վերջին պահանջը: Պառաւ Նարգիզն այս անգամ վճռեց իր հոգեպահուստ պատանքի փողը ծախսել: Նա ունէր միայն քսան ուրբլի: Գրեց որդուն վերջին ամսուայ փողն ստանայ ու գայ գիւղ ամուսնութեան համար: Սակայն Սըմկօն չուզեց մօր այդ փողերին ձեռք տալ. գրեց մօրը, որ ինքը վճռել է այլևս չամուսնանալ:

Այդ նամակից յետոյ նա այլևս նամակ չը ստացաւ մօրից. մի օր էլ լսեց, որ մայրը մեռել է ու թաղուել հասարակութեան հաշուով:

Նա զարմացաւ. հապա թնչ եղաւ մօրը այն քսան բուրիին:

Նամակ գրեց զիւղի քահանային և աղերսեց մի օրևէ տեղեկութիւն հաղորդել: Նա ստացաւ մի ասորօրինակ նամակ: Քահանան թաղման վարձն էր պահանջում—ուրիշ ոչինչ:

Սմկօն իր մի ամսուայ ոտճիկն ուղարկեց քահանային ու խնդրեց պատարագ մատուցանել և մօր գերեզմանն օրհնել:

Գիւղից եկողներին հարցրեց, բայց ոչ ոք դրական պատասխան չը տուաւ պատարագի մասին:

—Ես իմս արեցի. հոգով նա կը մնայ պարտական. այդպէս դատելով հաշտուեց իր վիճակի հետ և սկսեց աւելի սիրել գործը, այնպէս որ նրա ձիերը լաւ խնամքի պատճառով չաղանում գեղեցկանում էին ու պահանջուած չուէն կատարում մի քանի ժամուայ ընթացքում:

## II

Մի օր ըստ սովորութեան լծեց քառանդակը, կանգնեց կայարանի առաջ և սկսեց սպասել ճամբորդներին:

Վերջապէս կայարանի սենեակից դուրս եկան երկու հոգի:

—Վասեա, թնչ հրաշալի ձիեր են, բացականչեց կինը:

—Այո, խանում, սայլակից վրայ բերեց Սմկօն.—սրանք իմ ախպէրներն են: Սրանք են իմ մխիթարութիւնը... Աշխարհումս ոչինչ չուէնեմ, բացի էս իմ չորս սև ախպէրներից. նրանք թոչուտ են: առիւծի ման և իմ քառանդակով գնացող աղաներն այդ պատճառով լաւ են ինձ վարձատրում: Եթէ սրբանք չը թոչեն, էդ աղաները միայն կը հայհոյեն ու ոչինչ չեն տալ:

—Լաւ, ես էլ քեզ կը տամ ԻՅ ՊՅԻ, տեսնենք, ընդմիջեց նրան կնոջը թէր բռնած պարոնը:

Նրանք նստեցին:

Կառքը սլացաւ:

Սմկօն խրախուսում էր նժոյգներին: Քսան

վերստ տարածութիւնը անցան մի ժամ 10  
րոպէում:

—Ապրես. կառքից իջնելով խօսեց պա-  
րոնը. — կեանքիս մէջ առաջին անգամն է, որ  
քեզ պէս կառապան եմ տեսնում: Ահա ստա-  
ցիր. և նա տուաւ նրան մի րոպէի:

—Շնորհակալ եմ աղա. ո՞վ է էս աղջիկը,  
եթէ էդ էլ ինձ ասես շատ շնորհակալ կը  
լինեմ:

—Սա իմ նշանածն է. նոր եմ ամուսնա-  
ցել, այժմ գնում եմ ամառանոց:

—Ուրեմն ես չեմ սխալուել, վրա բերեց  
Սմիլօն: — Ես էլ էդպէս էի կարծում... Երա-  
նի քեզ... Երեսուն տարի է, ես էլ ուզում  
էի ամուսնանալ, բայց չեղաւ:

— Ինչո՞ւ, հետաքրքրեց պարոնը:

— 50 մանէթ փող հաւաքել չըկարողացայ,  
որ կարողանայի ամուսնանալ:

— 30 տարի 50 մանէթ չըկարողացար. ա-  
մսական ի՞նչ ես ստանում:

— Հիմի 17 մանէթ, իսկ առաջ 7-ը:

— Այդ խօսմ հացի էլ հերիք չի անիլ:

— Ուրեմն հիմա իմացաք զարդս:

— Ելէնա, լսում ես. դարձաւ նա ծիծա-  
ղելով երիտասարդ կնոջը:

— Լսում եմ ու զարմանում... կառապան,  
եթէ այժմ 50 մանէթ ունենաս կամուսնա-  
նաս. հարցրեց կինը:

— Ո՞նց ամուսնանամ, արդէն 47 տարեկան  
եմ դարձել:

— Ես այժմ 50 տարեկան, եմ, ուրեմն չը-  
պիտի ամուսնանայի՞, միջամտեց պարոնը:

— Կնիկդ քանի՞ տարեկան է. հարցրեց  
Սմիլօն:

— 20 տարեկան:

— Էդ քաղքցիների մէջ կարելի է. մենք  
չենք կարող:

— Ախր ինչո՞ւ, հետաքրքրուեց տիկինը:

— Մենք դիմացկուն երեխաներ ենք ու-  
զում, փիթող ծառին ինչքան էլ նոր զալամ  
քաշես, բան չի դառնալ:

Պարոնը նայեց կնոջը, կառապանին, ապա  
մտաւ կայարանապետի մօտ, նոր կառք ու  
ձիեր պահանջելու:

— Սնում, ներեցէք, երեւի աղան նեղացաւ  
ինձանից, խօսեց Սմիլօն ու գլուխ տալով,  
քառանդակը քշեց կայարանի բակը:

## III

Մօր մահուանից յետոյ անցել էր արդէն տասն-հինգ տարի: Վճռեց գոնէ մի անգամ գնալ գիւղ մօր գերեզմանն օրհնել տալ, կատարել վերջին պարտքը և էլ չըվերադառնալ այն գիւղը, ուր երազում էր ապրել բախտաւոր:

Սակայն նրան այդ չէր աջողուում, որովհետև կայարանապետը արձակուրդ չէր տալիս:

Այն կայարանը, ուր ծառայում էր Սմկօն, գիւղից հարիւր վերստ հեռաւորութեան վերայ էր գտնուում:

Աշուն էր: Նա իր սովորական երթն էր կատարում խճուղու վրա: Այրող ամրան յաջորդել էր կանաչ աշուն: Դաշտերը յորդ անձրևներից նորից կանաչել էին, ծառերը տերևները թարմացել, այնպէս որ Սմկօն իր քառանդակով արշաւելիս մխիթարուում էր նորից կանաչ հագած լեռներից, ձորերից, հովիտներից ու դաշտերից:

Մի օր տարօրինակ միտք ծագեց նրա գլուխում: Քառանդակով գնալ գիւղ, ցանկացածը

կատարել և իսկոյն վերադառնալ: Իւրաքանչիւր հերթից յետոյ նա իր տրամադրութեան տակ ունէր ըւթ ժամ. կայարանապետը նրա մասին հեռաքրքրուում էր միայն այն ժամանակ, երբ նրա հերթն էր գալիս:

Սկսեց ձիերին սաստիկ խնամել: Այժմ, էլ նրանց արագ չէր քշում, թէև երթեկնների կողմից ստանում էր նկատողութիւն, շատերից էլ հայհոյհանք:

Եկաւ նրա հերթը: Այս անգամ ինքը տէրն էր երթեկը. երբ Սմկօի ձիերին տեսաւ, ուղղակի ապշեց: Նա խիստ գովեց նրան և հրամայեց իր հունարը ցոյց տալ:

Սմկօն սլացաւ:

— Ի՞նչ ես ստանում Սմկօ, հետեալ կայարանը հասնելուց յետոյ հարցրից. կապաւոտուն:

— Հիմի 17 մանէթ:

— Ես կասեմ, որ 3 մանէթ աւելացնեն: Ապրես, հալալ է քեզ տուածը: Քո ձիերից եղ է կաթում:

— Շնորհակալ եմ աղա, էլ ոչինչ հարկաւոր չէ: Հս քամբախ ճանապարհը ինձ դըժ-



բախտացրեց: Նա հակիրճ պատմեց իւր ցաւը:

—Այժմ միայն մի մուրազ ունեմ. գնալ գիւղ, մօրս գերեզման օրհնել տալ, բայց չեմ կարողանում:

—Ինչո՞ւ:

Սմկօն պատմեց:

—Ո՞ր գիւղիցն ես.

—Զորաբանչի եմ:

—Քեզ 3 օր արձակուրդ, գնա՛:

—Իսկ ո՞ւմ թողնեմ՝ էս իմ ախպէր ձիերը:

—Միթէ՞ քիչ կան կառապաններ:

—Ես ոչ ոքի չեմ հաւատում:

—Ուրեմն ի՞նչ ես ուզում անել:

—Երեք օրուան տեղ, մի օր տուէք իրաւունք միայն իմ ձիերով: Նա պատմեց իւր ծրագիրը:

—Միթէ այդ հնարաւոր է:

—Աղա, ես այդ կանեմ, ու սկսեց աղերսել:

—Սօմ կճաքեն ձիերը, նրան լսելուց յետոյ նկատեց տէրը:

—Աղա, ես իմ գլխով պատասխան եմ տալիս:

—Փորձի համար տար ինձ մի գլուխ թիֆլիս, եթէ ձիերը չըլողնեցին, այն ժամանակ իրաւունք եմ տալիս:

Թէև կայարանապետը հակառակեց, որ ձիերը կարող են փչանալ, բայց տէրը հաստատ մնաց իր վճռին:

Սմկօն սլացաւ: Նա թռչում էր: Ձիերը խաղում էին քառանդակի տակ: 60 վերստը երեք ժամում անցան ու հասան քաղաք:

Ձիերը ոչ միայն յողնել էին, այլև նրանցից ոչ մէկն էլ չէր քրտնել:

—Աղա, տեսա՞ր իմ հունարը: Քառանդակից իջնելով ու ձիերի բաշերը հերթով քաշելով, խօսեց Սմկօն:

Աղան ոչինչ չասաց, մտքում վճռելով, որ այս ձիերից կարելի է մեծ օգուտ ստանալ վաճառելով նրանց:

—Աղա, ամեն մէկ ձիս հազար մանէթ արժէ:

—Այո, ես էլ հէնց այդ եմ մտածում: Գիտես ինչ: Մենք ցուցահանդէս կը տանենք քո ձիերը, ապա քեզ իրաւունք կը տամ գնալ գիւղ:

Սմկօն տիրոջ միտքը ի հարկէ չը հասկացաւ:

Հետեւալ օրը երեկոյեան աղան ասաց նրան.

—Սմկօ, երկու օրից յետոյ Թիֆլիսում ձիարշաւ է. լաւ խնամիր ձիերիդ: Ձիարշաւը վերջանալուց յետոյ դու ազատ ես:

#### IV

Սմկօն խիստ ուրախացաւ, որ իր հրեղէնները մրցութեան պիտի դուրս գան, ուստի նա այդ երկու օրը այնպէս էր փայփայում ու խնամում նրանց, ինչպէս սիրող մայրը իր միակ զաւակին:

Հասաւ ձիարշաւի օրը: Առաւօտեան նա նոր վերջացրել էր գործը, որ գոմը մտաւ տարօրինակ հագուստներով մի երիտասարդ պարոն, տիրոջ հետ միասին:

—Սմկօ, այսօր ձիերը պիտի քշի այս պարոնը: Կօգնես սրան:

—Հըմ, վրայ բերեց այդ պարոնը ձիերին լաւ գննելուց յետոյ:—Սրանցով հրաշք կարելի է գործել:

—Տեսնենք, նկատեց տէրը:—Սրանք կառքի տակ են քաջ արշաւում, թամբի տակ էլ եթէ նոյնը լինի, այն ժամանակ մրցանակը մերն է:

Նրանք այլևս ոչինչ չը խօսեցին:

Սմկօն նոր պարոնի հրամանով ձիերը տարաւ մրցանակի ասպարէզը:

Սմկօի չորս երիվարներն էլ մրցանակներ տարան:

Մի զինուորական մօտեցաւ կապալառուին:

—Եթէ վաճառէք, ես կ'ոնեմ, ասաց նա:

—Չորս ձի՛ն էլ:

—Այո՛. ես սրանց կ'այսեր գոմը պիտի ուղարկեմ:

Վաճառքը գլուխ եկաւ:

Ձիերը տարան. Սմկօն տխուր նայելով հեռացող նժոյգներին, սկսեց արցունքի խոշոր կաթիլներ թափել աչքերից:

Ձինուորականն ու նախկին պարոնը մօտեցան նրան:

—Ահա քեզ նուէր, ասաց զինուորականը ու տուաւ նրան մի թղթադրամ.—լաւ ձիեր ես պահել:

Սմկօն չը վերցրեց: Զինուորականը մը-  
տածեց գուցէ քիչ է, սւտաի մի թղթադրամ  
էլ աւելացրեց:

Սմկօն արցունքոտ աչքերը նրան դարձ-  
րեց:

— Ի՞նչ է, լաց ես լինում:

Սմկօն սկսեց մանկան պէս հեկեկալ:

— Երևի շատ էիր սիրում նրանց, միջա-  
մտեց նախկին պարոնը:

— Այա, նրանք միակ մխիթարութիւնս  
էին... Դրանից էլ զրկուեցի... Ինչո՞ւ ինձ  
էլ ձիերիս հետ չը ծախեցիր...

Երկու աղաները սկսեցին ծիծաղել Սմկօի  
այդ տարօրինակ ցանկութեան վրայ, իսկ  
Սմկօն լուռ նայելով նրանց՝ հեռացաւ զը-  
լիկոր



« Ազգային գրադարան



NL0254617